ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 21-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

2. Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

3. Հողի հարկի գծով արտոնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

4. Համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 22-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել Եղեգնավան համայնքի 2017 թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի
ավագանու 18.11.2016 թ-ի թիվ 22-Ն որոշման

ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2017 թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

<u>հիմնական օբյեկտների համար՝</u>

ա/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

բ/ սույն կետի „ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

բգ/ 1001 մինչև 3000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70.000 դրամ:

<u>ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝</u>

գ/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ,

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ

սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններիների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5,000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5,000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքին (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

6 . Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրայինսննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատներըժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

ե) համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ սույն որոշմամբ նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքի բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սույն որոշմամբ նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50.000 դրամ:

12. Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100 000 դրամ:

13. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը տարեկան սահմանվում է՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 3000 դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մինչև 1 հա.-ի համար՝ 1.000 դրամ, 1 հա-ից 10 հա-ի համար՝ 5.000 դրամ, 10 հա և ավելի դեպքում՝ 10.000 դրամ:

16. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար ընթացիկ տարվա համար սահմանվում է 5.000 դրամ:

17. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության ամսական վճար.

1/ Կենցաղային աղբի համար՝ 1 շունչ՝ 100 դրամ:

2/ Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղականինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝

ա/ ըստ ծավալի՝ 1 խորանարդ մետրի համար՝ 1000 դրամ,

բ/ ըստ զանգվածի՝ 1 տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

3/ Պետական և ոչ պետական հիմնարկները՝

ա/ մինչև 20 քմ մակերես ունեցող շինությունների համար՝ 300 դրամ,

բ/ 20 քմ և ավելի մակերես ունեցող շինությունների համար՝ 500 դրամ:

18. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0.3 գործակիցը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 23-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Խմելու ջրի վարձ ընթացիկ տարվա համար սահմանել 1 խմ՝ 160 դրամ:

2. Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողներից յուրաքանչյուր ամիս մեկ երեխայի համար տեղական վճարը սահմանել 5000 դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 24-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի գ ենթակետի.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. 0,368 հա. վարելահողերի վրա խաղողի նորատունկ այգի հիմնած Սպարտակ Ամիչանյանին ազատել վերը նշված հողի հարկից 2017 թ-ի հունվարի 1-ից մինչև 2020 թ-ի դեկտեմբերի 31-ը:

2. 0,14 հա. վարելահողերի վրա խաղողի նորատունկ այգի հիմնած Նազիկ Հայրապետյանին ազատել վերը նշված հողի հարկից 2017 թ-ի հունվարի 1-ից մինչև 2020 թ-ի դեկտեմբերի 31-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, /0234/ 6 26 46, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 25-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Հանգիստ, մշակույթ, կրոն /բաժին-8, խումբ-5, դաս-1,ծրագիր-55/

Աշխատողների աշխատավարձեր՝ 4111 հոդվածը պակասեցնել 800.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 5362.0 հազ.դրամ:

Ընդհանուր բնույթի ծառայություն /բաժին-1, խումբ-3, դաս-3, ծրագիր-55/

Ընդհանուր բնույթի այլ ծառայություն՝ 4239 հոդվածը ավելացնել 800.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 2300.0 հազ.դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
4. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱՋԱՐՅԱՆ